ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«09» Դեկտեմբերի 2026 **թվականի** N 3246-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՇԱՎԱՐՇԻ ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ N 4 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 153.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1(ՄԵԿ) ՊԱՏՈՒՀԱՆԸ ԵՎ 2(ԵՐԿՈՒ) ԴՈՒՌԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Անուշավան Շավարշի Պապիկյանին պատկանող (հիմք ըստ տան տեխնիկական անձնագրի՝ տրված 22.02.1989 թվական N 7556) Գյումրի քաղաքի Թումանյան փողոց 2-րդ նրբանցք N 4 հասցեի հողամասում մինչև 2001 թվականի մայիսի 15-ը ինքնակամ կառուցվել է 153.0 (հարյուր հիսուներեք ամբողջ) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինություններ, ինքնակամ բացվել է 1(մեկ) պատուհան և 2(երկու) դուռ:

Քաղաքացի Անուշավան Շավարշի Պապիկյանը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին՝ նշված շինությունները օրինական ճանաչելու խնդրանքով:

Նկատի ունենալով վերոգրյալը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետի և 18-րդ կետի դ) ենթակետի, հաշվի առնելով, որ կառույցի պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառույցը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում հաշվառված 2026VWUN3B ծածկագրով մուտքագրման տեղեկանքը, քաղաքացի Անուշավան Շավարշի Պապիկյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2026 թվականին N 17272 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղաքացի Անուշավան Շավարշի Պապիկյանին պատկանող Գյումրի քաղաքի Թումանյան փողոց 2-րդ նրբանցք N 4 հասցեի տան հողամասում ինքնակամ կառուցված 153.0 (հարյուր հիսուներեք ամբողջ) քառակուսի մետր ներքին մակերեսով բնակելի շինությունները ճանաչել օրինական:
2. Քաղաքացի Անուշավան Շավարշի Պապիկյանին պատկանող Գյումրի քաղաքի Թումանյան փողոց 2-րդ նրբանցք N 4 հասցեի տան հողամասում ինքնակամ բացված 1(մեկ) պատուհանը և 2(երկու) դուռը ճանաչել օրինական, տեղական բյուջե ենթակա է գանձման 9618/ինը հազար վեց հարյուր տասնութ/ Հայաստանի Հանրապետության դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Անուշավան Շավարշի Պապիկյանին պատշաճ կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:
4. Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումն իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ

Восстановимая подпись

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: ARAKELYAN AVETIS 3910850276 **Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ**